ԱԾԱԿԱՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Հայերենի նյութական իմաստ ունեցող խոսքի մասերի համակարգում դերանունը յուրահատուկ տեղ է գրավում: Դերանվան՝ իբրև առանձին խոսքի մասի հարցում եղել են և կան տարակարծություններ. ոմանք այն տարրալուծում են գոյականների, ածականների և մակբայների միջև: ԿԳՆ-ի ընդունած հայոց լեզվի և գրականության առարկայական ծրագրերի[1] և չափորոշիչների համաձայն լույս տեսավ «Հայոց լեզու» դասագիրքը[2] (7-րդ դասարան), որտեղ դերանունը տարրալուծվել է հարա-բերակից խոսքի մասերի մեջ:

Մ.Աբեղյանը խոսքի մասերի համակարգում առանձնացնում է դերանվան հետևյալ տեսակները՝ դերանուն գոյական կամ գոյական դերանուններ, դերանուն ածականներ և դերանվանական մակբայներ[3]: Ըստ նրա, ածականներ են համարվում ածականի հետ իմաստային և կիրառական ընդհանրություններ ունեցող այն բոլոր բառերը, որոնք ցույց են տալիս ածականական հատկանիշ. հետևաբար ածականներ են համարվում թվականները, ենթակայական և հարակատար դերբայները, ինչպես նաև որոշ դերանուններ:

Ածականների և դերանունների միջև կան նաև իմաստային և կիրառական տարբերություններ. ածականները ցույց են տալիս տարբերակված հատկանիշ՝ որոշակիորեն անվանելով այն, իսկ դերանունները ոչ թե անվանում, այլ ցույց են տալիս չտարբերակված հատկանիշ, որ որոշակի է դառնում միայն համապատասխան իրադրության մեջ՝ խոսքում: Այդ է պատճառը, որ ասենք, *այդպիսի* դերանունը կարող է նշանակել ամեն տեսակի հատկանիշ: Հմմտ. բարձր՝ գաճաճ՝ մրգատու՝ կանաչ ծառ և այսպիսի ծառ[4]:

Ս. Աբրահամյանը դերանվան խոսքիմասային առանձնահատկությունը համարում է նրա չտարբերակված իմաստ ունենալը, և դերանունները բնորոշում է իբրև այնպիսի բառեր, որոնք ունենալով ընդհանուր, չտարբերակված իմաստ, ոչ թե անվանում են առարկան, հատկանիշը, այլ դրանք ցույց են տալիս կամ ակնարկում են որևէ հարաբերությամբ, որևէ ձևով[5]:

---

[1] Հայոց լեզու և գրականություն. հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Ե., 2006:
[2] Հայոց լեզու (7-րդ դասարան), հեղ.՝ Ֆ. Խլղաթյան, Լ. Խաչատրյան, Ե., 2006:
[3] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 365 :
[4] Հ. Հարությունյան, Ածական անուն, դերանուն, Ե., 1976, էջ 5:
[5] Ս. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, Ե.,1956, էջ 62:

Իսկ Մ.Ասատրյանը մերժում է դերանունների ճանաչման հարցում նրանց ընդհանուր չտարբերակված իմաստը և նկատում է, որ ի տարբերություն գոյականների, ածականների, թվականների, մակբայների՝ դերանունները մատնացույց են անում, ակնարկում են առարկա կամ հատկանիշ որոշ հարաբերությամբ[6]:

Դերանվան մյուս առանձնահատկությունն այն է, որ հարաբերակից խոսքի մասերից տարբերվում է նաև առարկա, հատկանիշը որևէ հարաբերությամբ ցույց տալու հանգամանքով (այսպիսի, այդպիսի, այնպիսի):

Կարող ենք ասել, որ դերանունը չունի այնպիսի ընդհանուր հատկանիշ, որպեսզի կարողանա հանդես գալ իբրև առանձին խոսքի մաս:

Դերանունները բաժանվում են առարկայանիշ և հատկանշային տեսակների: Առարկայանիշ դերանունները մտնում են գոյական անվան մեջ, իսկ հատկանշային դերանունները՝ ածականի, մակբայի և թվականի մեջ՝ ըստ արտահայտած հատկանշային իմաստների (առարկայի կամ գործողության հատկանիշ):

Սույն հոդվածում կփորձենք մատուցել ածականական դերանունների ուսու-ցումն ըստ վերոնշյալ տարբերակումների:

Ածական խոսքի մասի ուսուցման ընթացքում աշակերտները յուրացնում են, որ ածականը ցույց է տալիս առարկայի որակական՝ գեղեցիկ (աղջիկ), անուշ (ձայն), բարձր (շենք) կամ հարաբերական՝ երկաթե (դարպաս), փայտյա (սեղան) հատկանիշ:

Ածական խոսքի մասի ուսուցումն ավարտելուց հետո փորձում ենք ածականների բառաքերականական իմաստներն արտահայտել նրանց փոխարինող այլ բառերով՝ դերանուններով: Այդ նպատակով գրատախտակին գրում ենք դերանուններ, որոնց մեջ առարկայի հատկանիշն արտահայտված է ածականներով: Գործադրելով համեմատության հնարը՝ փորձում ենք ածականները փոխարինել այլ բառերով և ցույց տալ նրանց նմանություններն ու տարբերությունները:

Օր՝ Երկինքը ծածկված էր միածույլ բաց կապտագույն ամպերով, ու դեռ մեկ-մեկ բարակ, միալար անձրև էր մաղում (Վրթանես Փափազյան):

Այսպես, դիմենք փոխարինման հնարին. միածույլ ամպեր-այսպիսի ամպեր, բաց կապտագույն ամպեր-այսպիսի ամպեր, բարակ, միալար անձրև-այսպիսի անձրև: Լեզվական կառույցների վերլուծությունից պարզվում է, որ, միածույլ, բաց կապտագույն, բարակ, միալար, ածականներին փոխարինում են *այսպիսի, այդպիսի, այնպիսի* դերանունները:

---

[6] Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր. Ե., 1977, Բ, էջ 114:

Աշակերտները նկատում են, որ եթե նշված ածականներն արտահայտում են ամպեր, անձրև, գոյականների կոնկրետ ինչպիսին լինելը կամ ինչպիսի հատկանիշ ենթակային վերագրելը, ապա նրանց փոխարինող (հարաբերակից) *այսպիսի, այդպիսի, այնպիսի* դերանուններն արտահայտում են նշված առարկաների չտարբերակված հատկանիշները:

Բացատրությանը հաջորդում է սահմանումը ձևակերպելը՝ *Այն բառերը, որոնք նախադասության մեջ փոխարինում են ածականներին և ցույց են տալիս առար-կաների չտարբերակված հատկանիշներ, կոչվում են ածականական դերանուններ:*

Այնուհետև ներկայացնում ենք ածականական դերանունների ցանկը՝

այս	այսպիսի	ո՞ր	այսինչ
այդ	այդպիսի	որպիսի՞	այդինչ
այն	այնպիսի	բոլոր	այնինչ
նույն	նույնպիսի	յուրաքանչյուր	որևէ
սույն	միևնույն	ողջ	որևիցե
մի	ոչ մի	ամբողջ	ինչ-որ
ինչպիսի՞	ամեն մի	համայն	ինչ-ինչ
այլ	ուրիշ	որոշ	
մյուս	ամենայն		

Հանձնարարում ենք կազմել բառակապակցություններ ցանկում ընդգրկված դերանուններով, ապա բացատրել նրանց իմաստը՝ հնարավորության դեպքում փոխարինելով ածականներով:

Օրինակ՝ այդ ծառը-մենավոր ծառը, այսպիսի գիրք-հետաքրքիր գիրք, մյուս այցելուն-հաջորդ այցելուն, նույն ձայնը-ծանոթ ձայնը, ինչ-ինչ պատճառով-անհաս-կանալի պատճառով, ինչ-որ մարդ-անծանոթ մարդ և այլն:

Այս, այսպիսի, մյուս, նույն, ինչ-ինչ, ինչ-որ դերանունները ցույց են տալիս ծառը, գիրք, այցելուն, ձայնը, պատճառով, մարդ գոյականների չտարբերակված (անորոշ) հատկանիշ, մինչդեռ *մենավոր, հետաքրքիր, հաջորդ, ծանոթ, անհասկանալի, անծանոթ* ածականները ցույց են տալիս նշված գոյականների տարբերակված, որոշակի հատկանիշներ: Հետևաբար դերանունների իմաստները որոշակի են դառնում միայն նրանց հարաբերակից ածականների իմաստներից:

Ածականների և դերանունների իմաստային յուրահատկությունները բացատրելու նպատակով կատարում ենք կիրառական վարժություններ:

Օրինակ, պահանջում ենք գտնել տրված նախադասությունների ածականները, դրանք փոխարինել համապատասխան դերանուններով և լրացյալի հետ գործածել ուրիշ նախադասությունների մեջ:

Ու կանգնել էր նա բիբլիական լեռան գագաթին: Լեռան լանջից ծորում էր շինականի տխուր հորովելը:

Նմուշ՝ Ու կանգնել էր նա *բիբլիական* լեռան գագաթին: *Այդ* լեռան գագաթը բարձրացել է Խաչատուր Աբովյանը:

Ածականական դերանուններն ունեն ածականին բնորոշ կիրառություններ: Նախադասության մեջ կատարում են որոշչի և ստորոգելիական վերադիրի պաշտոն: Այսպիսի մտահանգման կարող ենք աշակերտներին ուղղորդել՝ գործադրելով ուսուցման դեղուկտիվ եղանակը: Այդ նպատակով առաջարկում ենք հետևյալ վարժությունը:

Գտի՛ր ածականական դերանունները, որոշի՛ր նրանց պաշտոնը նախադասության մեջ:

Ուրիշ այդ ո՞ր դարում,
Ուրիշ ո՞ր աշխարհում
Կար, կարող էր լինել մի այդպիսի սերունդ
Հավերժական կայտառ, երիտասարդ,
Եվ միևնույն պահին՝
Իմաստությամբ, փորձով, տառապանքով հարուստ(Պարույր Սևակ):
Նույնն է կարոտս հիմա՝ անսփոփ ու բորբ,
Նույնն է աշխարհը վառվող ու արևը բորբ(Եղիշե Չարենց):

Հարցերի միջոցով աշակերտները կպարզեն, որ նշված դերանունները կատարում են որոշչի և ստորոգելիական վերադիրի պաշտոն:

Ածականները կարող են գործածվել նաև փոխանվանաբար (գոյականաբար), ուստի նրանց փոխարինող բառերը՝ դերանունները, նույնպես հանդես են գալիս փոխանուն կիրառությամբ՝ ստանալով համապատասխան հոդ և հոլովվում փոխանվանական *ի* հոլովմամբ: Դերանունն իր մեջ է առնում նաև լրացյալ գոյականի իմաստը, ստանում նրա անվանական կարգերը[7]:

Ուղղ.	այսպիսի/ն/	բոլոր/ը/	այսինչ/ը/	ուրիշ/ը/
Սեռ.	այսպիսինի	բոլորի	այսինչի	ուրիշի
Տր.	այսպիսինի/ն/	բոլորին	այսինչին	ուրիշին
Հայց.	այսպիսի/ն/	բոլոր/ն/	այսինչ/ը/	ուրիշ/ը/
Բաց.	այսպիսինից	բոլորից	այսինչից	ուրիշից
Գործ.	այսպիսինով	բոլորով	այսինչով	ուրիշով
Ներգ.	այսպիսինում	բոլորում	այսինչում	ուրիշում*

Իրողությունն ամրապնդելու նպատակով կատարում ենք վարժություններ:

Վարժություն 1. Ածականական դերանունները գործածի՛ր համապատասխան հոլովով:

---

[7] Հ. Հարությունյան, Ածական անուն, դերանուն, էջ 81:

* Սնձի դեպքում բոլոր և ուրիշ դերանունները ներգոյական հոլովածև չունեն:

Սամվելը (բոլոր) համար խոսք ուներ, (բոլոր) ողջունում էր ու (բոլոր) առող-ջությունը հարցնում (Ռաֆֆի): Բայց սիրել նրան , ով խաղում է (ուրիշ) նվիրական զգացումի հետ..., ավա՜ղ, սինյորա, ես չեմ կարող (Նար-Դոս):

Վարժություն 2. Կետերի փոխարեն տեղադրիր համապատասխան ածականա-կան դերանուններ:

Վերջին խոսքերն ... մաղձոտ ձայնով արտասանեց փոքրիկ երիտասարդը, որ նետի նման մխրճվեց մեծափառ պարթևի սրտում: Եվ ... միջոցին փոքրիկ երիտասարդը ձեռքը տարավ դեպի արծաթյա քամարը, որից քարշ էր ընկած ... կարճ սուսեր (Ռաֆֆի): (այնպիսի, այդ, մի)

Բացատրում ենք, որ եռանդամ հակադրություններ են կազմում հետևյալ ածա-կանական դերանունները. այս, այդ, այն. այսպիսի, այդպիսի, այնպիսի:

Այնուհետև նշված բառերով կազմում ենք նախադասություններ և ցույց տալիս դերանվան և նրա լրացյալի ունեցած հարաբերությունը խոսողի նկատ-մամբ:

Օր.՝ Բայց *այն* պատմությունը անգիտակցաբար երևան է հանում *այն-պիսի* նշմարներ, որոնք հակառակ վկայություն են տալիս, որոնք ստիպում են կատար-ված չարիքների արմատները որոնել ավելի խորին, ավելի հիմնավոր. պատ-ճառների մեջ:

Քրիստոնեության բարոյական *այս* ազդեցությունը չէր կարող *այսպիսի* հրեշա-վոր արդյունքներ առաջ բերել: *Այդ* ցանցի մանր ու անձուկ հյուսվածքի մեջ սեղմված էին խորին ծորեր, մթին հովիտներ, և նեղ դաշտեր. *այդպիսի* ծորերը, հովիտները, դաշտերը ներկայացնում էին մի-մի գավառ, որ բաժանված էր բնական սահման-ներով (Ռաֆֆի):

Այս ազդեցությունը և այսպիսի արդյունքներ բառակապակցություններ-ում *այս, այսպիսի* դերանունները ցույց են տալիս որոշյալների ունեցած տարածական հարաբերությունը առաջին դեմքի նկատմամբ, *այդ ցանցի, այդպիսի ծորերը, հովիտները, դաշտերը* բառակապակցություններում (այդ, այդպիսի)՝ երկրորդ դեմքի, իսկ *այն պատմությունը, այնպիսի նշմարներ* բառակապակցություններում (այն, այնպիսի)՝ եր-րորդ դեմքի նկատմամբ:

Վերլուծական այս աշխատանքից հետո եզրակացնում ենք, որ *այս, այսպիսի* դերանունները ցույց են տալիս խոսողին մոտ գտնվող առարկաների հատկանիշ, *այդ, այդպիսի* դերանունները՝ խոսակցին, իսկ *այն, այնպիսին* ո՛չ խոսողին, ո՛չ խոսակցին, այլ մի երրորդ անձի մոտ գտնվող առարկայի հատկանիշ:

Ածականական դերանունները գործառական յուրահատկություն են դրսևորում, որը պայմանավորված է նրանց բառիմաստային նրբերանգով. որոշ դերանուններ կապակցություն են կազմում հոգնակի թվով գոյականների հետ,

որոշ դերանուններ՝ եզակի գոյականների հետ, որոշ դերանուններ էլ թե եզակի և թե հոգնակի գոյականների հետ:

Այսպես, *բոլոր* հատկանշային դերանվան հետ որոշյալը դրվում է միայն հոգնակի թվով (բոլոր ծաղիկները, բոլոր երկրները, բոլոր գրողները), յուրաքանչյուր, *ոչ մի, ամեն մի, ամենայն* դերանունների հետ՝ եզակի թվով (յուրաքանչյուր գրող, ոչ մի ծաղիկ, ամեն մի քար, ամենայն մարդ), *այս, այդ, այն, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույն, միևնույն, ինչպիսի՞, ուրիշ* դերանունները՝ և եզակի, և հոգնակի լրացյալների հետ (այս այգին-այգիները, այս տունը-տները, այսպիսի շինություն- շինություններ, նույն հարցը-հարցերը, միևնույն որոշումը–որոշումները, ինչպիսի՞ ներկ-ներկեր, ուրիշ երկիր-երկրներ), իսկ *ողջ ամբողջ, համայն* դերանունները՝ հա-վաքական իմաստ արտահայտող լրացյալների հետ (ողջ երկիրը, ամբողջ բերքը, համայն մարդկությունը):

Ածականական դերանունների իմաստային նկարագիրն ամբողջացնելու համար հաղորդում ենք, որ որոշ դերանուններ արտահայտում են առարկայի հատկանիշի անորոշություն՝ *մի, ինչ-որ, ինչ-ինչ, որևէ:*

Կարդում է նա իր աչքերով ծավի,

Ժպտում է, հիշում , կարծես *ինչ-որ* բան(Եղիշե Չարենց):

Նորից լսվեցին *ինչ-որ* մրթմրթոց և ուրիշ խառը ձայներ, որից հետո աղմուկով բացվեց նույն դուռը, և դուրս թռավ *մի* պարոն(Նար-Դոս):

Եթե *որևէ* հնարքով թշնամին իրեն կարողանա գցել այդտեղ, նրանք կհայտնվեն այլ թաքստոցներում և այդտեղից կսկսեն կրակ ու քար թափել թշնամու վրա (Սուրեն Այվազյան):

Եվ եթե *ինչ- ինչ* սխալմունք կամ թերացում գտնեք իմ այս գործի մեջ, մի ուղղեք թեկուզ ողջախոհ կամքով, այլ ներումն շնորհեցեք(Սերո Խանզադյան):

Աշակերտների անմիջական մասնակցությամբ դուրս ենք գրում խնդրո առարկա հասկացությունները և ցույց տալիս, որ ածականական դերանունները (ինչ-որ, ինչ-ինչ, մի, որևէ) արտահայտում են լրացյալների (բան, մրթմրթոց, հնարք, սխալմունք) անորոշ, ոչ հայտնի հատկանիշ:

Լեզվական այս իրողությունն ամրապնդելու նպատակով առաջարկում ենք կա-տարել հետևյալ աշխատանքը:

Վարժություն. Կետերի փոխարեն տեղադրիր որևէ անորոշ դերանուն:

Ռշտունյաց նախարարը, որ շատ բան ուներ կուտակած իր մեջ Արտաշատից հետո, տուն էր գնում բոլորովին ... ծրագրերով, քան Արտակը: Փառանձեմը հիշում էր իր երազները, որ որդիները կդառնան ուսյալ, իմաստասեր մարդիկ, կբացեն դպրոցներ և կնվիրվեն ... գիտության (Դերենիկ Դեմիրճյան):

Այսպիսով՝ Դերանունների բառաբերակարգային խմբում զգալի քանակ են կազմում այն բառերը, որոնք արտահայտում են առարկայի հատկանիշ և ըստ այդմ առանձնանում են իբրև ածականական դերանուններ: Ածականական դերանուններն առարկայի հատկանիշն արտահայտում են անորոշ, ընդհանուր հարաբերությամբ, առանց որոշակի բառիմաստային մասնավորեցման: Նրանց իմաստային մասնավոր նշանակությունները ի հայտ են գալիս համապատասխան ածականների իմաստների զուգադիր քննությունից, երբ գործառական դաշտում դրանք միմյանց փոխարինում են: Ածականական դերանունների ուսուցումը նպատակահարմար է տանել լեզվական իրողությունների փոխարինման մեթոդական հնարով, որի ընթացքում հանդիպադրվում են հատկանիշ արտահայտող բառերը (ածականները) և նրանց փոխարինող համապատասխան (ածականական) դերանունները: Լեզվական այդ իրողության ուսուցման ընթացքում կարևորվում է ճանաչողական և ամրապնդող վարժությունների դերը: